



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱՎԱՆ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ

17.12.2019Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 11 անդամները:

Բացակայում են՝ Մ.Պողոսյանը, Գ.Երիցյանը, Ն.Բաբայանը, Ն.Վարդանյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Ա.Չաքարյանը, Գ.Աֆյանը և գյուղերի վարչական ղեկավարները:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 9 հերթական նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքում տեղական տուրքերի 2020 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:
2. Չարենցավան համայնքում տեղական վճարների 2020 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:
3. Չարենցավան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին:
4. Չարենցավանի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին:
5. Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի 2020 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
6. Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2020 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
7. Չարենցավան համայնքի տարածքում տնտեսավարողների կողմից առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում գիշերային անդորրն ապահովելու ժամեր սահմանելու մասին:
8. Չարենցավան համայնքի վարչական տարածքում գտնվող սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը /հեռավորությանը/ ներկայացվող պահանջները սահմանելու մասին:
9. Չարենցավան համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները:
10. Չարենցավան համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները սահմանելու մասին:
11. Չարենցավան համայնքի 2020 թվականի աղբահանության և սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին:
12. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:
13. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան՝

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:
Կողմ -11 դեմ - 0 ձեռնպահ -0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1 . Չարենցավան համայնքում տեղական տուրքերի 2020 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

/Չեկ.Բ.Բարսամյան/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածների դրույթներով՝ **առաջարկում եմ** հաստատել Չարենցավան համայնքում 2020 թվականին կիրառվող տեղական տուրքերի դրույքաչափերը:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11

դեմ-0

ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2. Չարենցավան համայնքում տեղական վճարների 2020 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

/Չեկ.Վ. Չիլինգարյան/

Հաշվի առնելով, Հայաստանի Հանրապետության «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28.1-րդ հոդվածի համաձայն տեղական տուրքերը և վճարները հանդիսանում են համայնքի բյուջեի վարչական մասի եկամուտներ, **առաջարկում եմ** սահմանել Չարենցավան համայնքում տեղական վճարների 2020 թվականի հետևյալ դրույքաչափերը՝ համաձայն հավելվածների:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11

դեմ-0

ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. Չարենցավան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին:

/Չեկ.Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 54-րդ և 64-րդ հոդվածների դրույթներով՝ **առաջարկում եմ** հաստատել Չարենցավան համայնքի 2020 թվականի բյուջեն:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11

դեմ-0

ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4. Չարենցավանի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին:

/Չեկ.Ս. Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթներով՝ առաջարկում եմ՝ համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել ամսական 400000 ՀՀ դրամ:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11

դեմ-0

ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5. Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի 2020 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

/Չեկ.Ս. Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ և 35-րդ հոդվածի 1-ին մասի 6 -րդ և 7-րդ կետերի դրույթներով՝ առաջարկում եմ, հաստատել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի 2020 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

Չարենցավան համայնքի ղեկավարին՝ Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություն կատարելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին:

Սույն որոշման 1-ին կետն ուժի մեջ է մտնում Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություն կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից: